**ՀՀ Սյունիքի  մարզպետ Սուրիկ Խաչատրյանի ուղերձը Երեխաների պաշտպանության միջազգային օրվա առթիվ**

Սիրելի երեխաներ

Ջերմորեն շնորհավորում եմ աշխարհի ամենապայծառ տոներից մեկի՝ երեխաների պաշտպանության միջազգային օրվա առթիվ:

Յուրաքանչյուր հունիսի 1 ուրախության, ժպիտի, հույսի և սիրո ու, հատկապես մեծերիս համար, պատասխանատվության ու հոգատարության արտահայտման առանձնահատուկ օր է:

Հայ մարդու համար ընտանիքն ու երեխան միշտ սրբություն են եղել, իսկ երեխաների առողջության, կրթության ու դաստիարակության հարցերը բոլոր ժամանակներում էլ կարևորագույնն են հայոց օջախներում:

Այսօր թե մեր պետության և թե յուրաքանչյուր հասուն քաղաքացու համար առաջնային խնդիր է երեխաներին ուշադրությամբ ու հոգատարությամբ շրջապատելը, նրանց ինքնադրսևորման համար լավագույն պայմաններ ստեղծելը:

Թանկագին երեխաներ, մեր ուրախությունն ու հպարտությունն եք դուք, և մենք այսուհետ էլ կշարունակենք հոգալ ձեր կարիքները, պաշտպանել ձեր իրավունքներն ու շահերը:

Կրկին շնորհավորելով այս գեղեցիկ տոնի առթիվ, մաղթում եմ բոլոր երեխաներին խաղաղություն, ուրախ ու անհոգ մանկություն և բարեկեցություն նրանց ընտանիքներին:

Թող իրականանան ձեր բոլոր երազանքները, իսկ հաջողությունը ուղեկցի միշտ և ամենուր:

**ՀՀ Սյունիքի մարզպետ** **Ս. Խաչատրյան**

1 հունիսի 2012 թ.